№ 194 Նոյեմբերի 4 (16) 1880 Նոյեմբերի 4 (16) № 194

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստարարաղորդագիր տրվում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն ժամանակ:

Բաժանորդագրութիւնների համար գնվորում են
իւրաքանչիւր տարին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քիւրդերի շարժում:—Նոր բրին տեսութիւն: Նամակ Նոր-Նախիջեւանից: Նամակ Ս. Պետերբուրգից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Голосъ» լրագրի Զգուշացութիւնը: Նամակ Թիւրքիայից:—«Մշակի» հեռագրիներ:—Ցայտարարութիւններ:

ՔԻՒՐԴԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

—

Ընթերցողը կարդացած կը լինի մեր լրագրում տպված Պարսկաստանի նամակները, որոնք նը-կարագրելով քիւրդերի շարժումը Պարսկաստանում, պարզ ցոյց են տալիս որ այդ շարժումը պատրաստված է եղել Կ. Պոլսում և դրդված է եղել Ռ. Դունից: Վերջին ժամանակները Պարսկաստանը քաղաքական կեանքի մէջ աւելի համակրութիւն էր յայտնում քրիստոնեայ պետութիւններին, մանաւանդ Ռուսաստանին, քան թէ մահմետական Թիւրքիային: Ռուս-Թիւրքաց պատերազմի ժամանակ նա կանգնեցրեց զօրքը իր Թիւրքաց սահմանների վրա, նա մերժեց մասնակցել ընդհանուր մահմետական մոլեռանդական շարժման մէջ, որ առաջարկում էր Ռ. Դուռը, վերջապէս Ռերլինի կոնգրէսում Պարսկաստանը պահանջեց և ստացաւ Թիւրքիայից Կոտուր գաւառը:

Թիւրքիան վրդովված է Պարսկաստանի դէմ և երևի արիւնարբու քիւրդերին քշելով պարսիկների դէմ, ուզեցաւ իր վրէժը հանել պարսիկներից:

Ամենալաւ ապացոյց որ Թիւրքիայի թելադրութեամբ է կատարվում այդ շարժումը, այն է որ Հէյդ-Իբրագուլլահը Թիւրքաց հպատակ քիւրդ է և այժմ, ինչպէս լսվում է, Պարսկաստանի վրա արշաւանք գործելուց յետոյ, նա արդէն վերադարձել է Թիւրքաց հողը, բայց Ռ. Դուռը հանգիստ է թողնում և չէ կալանաւորում նրան:

Թիւրքիան երևի սխալվեց իր հաշի մէջ: Նա կարծում էր որ քիւրդերը կազմելով Պարսկաստանում մի զօրեղ միութիւն, միշտ միջոց կունենան յարձակվել Հայաստանի վրա, բայց ընդհակառակն քիւրդերը այժմ ջարդվում են պարսիկներից և այդպիսով Թիւրքաց Հայաստանն էլ ազատվելու է իր անհաշտ թշնամիների բարբարոսական յարձակումներից:

Քիւրդերի այդ անաջողութիւնը մեծ բաղդ է Թիւրքաց Հայաստանի քրիստոնեաների համար: Այո՛, դա բաղդ է, որ Թիւրքիան դարձեալ սխալվեց իր նենգաւոր հաշիների մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

15 հոկտեմբերի

Ինչպէս որ յայտնի է արդէն, «Մշակի» ընթերցողներին, (տես «Մշակի» 1879 թ., № 67, թատրոն Նոր-Նախիջեւանում) տեղիս թատերասէրները սրանից աւելի քան մէկ տարի առաջ, ներկայացրին կառավարութեանը՝ ի հաստատութիւն իրանց նորակազմելու Դրամատիկական արուեստ սիրողների ընկերութեան կանոնադրութիւնը: Եւ այդ կանոնադրութեան թոյլատրութեանը կառավարութիւնից՝ մեր թատերասէրներից շատերը անհամբերութեամբ սպասում էին, ըստ որում համոզված էին որ իրանց ձեռնարկութեան գոյութեան ապահովութիւնը և յառաջադիմութիւնը կախում ունէր նրանից: Արդարև այդպիսի ընկերութիւն մի առանց նիւթական միջոցների և զուրկ որ և իցէ թելադրիչ իրաւունքներից, կարող չէր մեզանում երկարաւոր գոյութիւն ունենալ,—երբ մտաբերենք, թէ ինչ տարերքից կազմված հասարակութեան մէջ հանդիսանում էր գործել: Նրա ևայեցեցէք ուրեմն որչափ մեծ ուրախութեան և զեղեցիկ յոյսերի պատճառ եղաւ մեր թատերասէրներին այն իրողութիւնը, երբ 29 յուլիսի 1880 թ., ներքին գործերի նախարարից հաստատված է իրանց ներկայացրած՝ Դրամատիկական արուեստ սիրողների ընկերութեան կանոնադրութիւնը: Այդ բերկրալի իրողութիւնը նրանց տալիս էր մի նոր հոգեկան այժ և վստահութիւն իրանց առաջադրած նպատակի մէջ:

Սակայն այդ հաստատած կանոնադրութիւնը քանի մի փոփոխութիւններով և յաւելուածներով մեզանում ստացվելուն պէս, հիմնադիրներից մեծ մասը խմբվեցաւ ամսոյս 3-ին, երեկոյեան տեղիս կլուբի մէջ, որ կարևոր նախապատրաստութիւններ առաջ առնէ՝ անդամների ընդհանուր ժողով կազմելու համար: Այդ ժողովի նախագահ ընտրվեցաւ պ. Մ. Խալիպեան, որ և կարդաց կանոնադրութիւնից քանի մի յօդուածներ, որոնք անհրաժեշտ պիտի իրագործվին առաջիկայ անդամների ընդհանուր ժողովում: Այնուից յետոյ միաձայն հաւանութեամբ վճռվեցաւ՝ բանալ ստորագրութիւն վասն անդամակցութեան՝ Դրամատիկական արուեստ սիրողների ընկերութեան Նոր-Նախիջեւանի, բաց այնմանէ ընտրվեցան երկու կարգադրիչներ՝ պ. պ. Պ. Սալթիքեան և Յ. Խատամեան, որոնց և յանձնվեցաւ նախընթաց ընդհանուր ժողովի հանդէսն կազմելու համար պէտք եղած կարևոր պատրաստութիւնները տեսնել ու հոգալ և ըստ կարելոյն անյապաղ գումարել անդամակցողներին ընդհանուր ժողովի մէջ տեղիս կլուբի դահլիճում:

Իսկ այդ զեղեցիկ գործի սկզբնաւորութեան պատճառ եղան և չը խնայեցին իրանց ժրաջան աշխատութիւնը նրա յաջողութեանը պ. պ. Մ. Պալասանեան, Մ. Խալիպեան, Յ. Խատամեան, Ղ. Ալաճալեան, Ս. Յարութիւնեան, Ս. Զիպիշեան և քանիսները, որոնք արժանի են վայելելու լիովին համակրութիւն և յարգանք մեր հասարակութեան կողմից:

Զգաստութեամբ խոստովանելով, չէ կարելի ասել, որ այդ ընկերութիւնը իր գործունէութիւնը սկսում է յաջող պայմանների մէջ: Տեսակն մենք չունենք մի յարմար թատրոնի շինութիւն, չունենք և նրա մշտական ծառայողներ: Մինչև այսօր թատերասէրների խումբը իր ներկայացումները կազմում էր մի մեացեալ պատսպարանի մէջ՝ զուրկ կարևոր յարմարութիւնից և կարօտ շատ ու շատ ծախքերի և վերանորոգութեան: Սպասել որ արդեան քաղաքային ինքնավարութեան ձայնաւորների խմբակցութիւնը այդ դիպուածում որ և է հոգատարութիւն և լուրջ համակրութիւն յայտնէ, աւելի քան անսերելի է: Իսկ անցեալ տարվայ կլուբի անդամների ցանկութիւնը՝ կառուցանել իրանց համար մի հոյակապ շէնք և միանդամայն նրա գահլիճում շինել մի վայելուչ և ամենայն յարմարութեամբ յատկապէս թատերասէրների համար—բեմ, մեում է չար բախտի բերմամբ մեր հասարակային կեանքի մթնոլորտի մէջ մի լոկ pia desideria: Այնուամենայնիւ տեղւոյս թատրոնի տերը՝ պ. Յ. Փոփովիանը, որ յայտնի է մեր հասարակային ասպարէզում իր առատաձեռն նուիրատուութիւններով և զանազան բարեգործութիւններով, ինչպէս որ լսում ենք, այս դիպուածում ևս չը պիտի զանցառուլինի ցոյց տալու՝ ինչպէս և միշտ իր հոգատարութիւնը մի ազգային և վսեմ ձեռնարկութեան համար: Մենք մեր կողմից կը խնդրենք պ. Յ. Փոփովիանին յիշել միայն իր արած բարեգործութիւնների գումարը, ապա այնպէս պակել նրանց՝ այս առթիւ ևս մի բարի և նախանձելի գործով—թողնելով առ միշտ այդ ազգօգուտ հիմնարկութեան ժամանակագրութեան մէջ մի բարի յիշատակ:

Բա այժմ շատերը մեզանից նայում են այդ ձեռնարկութեան վրա մի զարմանալի անտարբերութեամբ և կասկածանքով: Այդ շատ հասանական է. տակաւին մեր հասարակութիւնը այն մասաւոր և բարոյական հանդիսարդութեանը չէ եկած, որ անյապաղ ընդունէ այդ զեղեցիկ գործը իր գբրկառանութեան մէջ: Մինչև որ մեծամասնութիւնը հասարակութեան գիտակցաբար չը մերնէ այդ ընկերութեան մեծ խորհուրդը և նրա բարոյական ազդեցութիւնը ժողովրդի մասաւոր և հոգեկան վերածնելութեան մէջ, մինչև որ այդ նորածին ընկերութիւնը չը կանգնի մի հաստատուն հողի վրա և չը հանդիսանայ իր օգտարար գոյութեամբ մեր հասարակային կեանքի շարժման մէջ, նրա յառաջադիմութիւնը և գոյութեան ապահովութիւնը մասամբ կախում պիտի ունենայ այն անհատների բարեխիղճ և տոկուն աշխատութիւնից, որոնք առաջի ժամանակներում պարագլուխ պիտի կանգնեն այդ ընկերութեան վարչութեան գործունէութեան շրջանում: Իսկ մեր հասարակութիւնը, յուսայից ենք, որ իր կողմից չի խնայի իր նիւթական նպաստները այդպիսի գործի յառաջադիմութեան համար, ուրեմն մեում է գործել և գործել խելացի կերպով:

* * *

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Հոկտեմբերի 23-ին

Արդէն հազար անգամ կրկնած իրողութիւն է, որ հայոց հասարակ, ստորին զանգ ժողովուրդը միանգամայն շփոթվում է ազգութիւնը դատանութեան հետ. ուստի երբ մի հայ մարդ հեռանում է մայրենի երկրից դրից, նա կարծում է, թէ այլ ևս չէ պատկանում իր ազգին: Այսպիսի մի միտք կարծիք յատուկ է միայն անգրագացած, տգէտ եւ կամ մոլեռանդ հասարակութեան, որի հաւատարիմ բարեկամ հրապարակախօսները պարտական են լարել իրանց բանականութեան բոլոր ոյժերը արմատախիլ անելու այս սխալ դատողութիւնը: Իւրաքանչիւր մեր ազգայինը, լինեն նորա լուսաւորական, թէ կանոնիկ կամ բողոքական, սրբազնագոյն պարտք պիտի ստանձնեն իրանց վրա, համոզելու համար դատանակիցներին, թէ կրօնի խտրութիւնը ամենեին չէ նշանակում ազգից անջատվելը: Երբ այսպիսի մեկնութիւն մուտ կը գործէ, հասարակութեան մէջ, կանգան դատանութեանց առաջիւ յարուցած բանակռիւները եւ խռովութիւնը ինքն ըստ ինքեան կը դադարեն: Բայց ցանկալի է իմանալ արդեօք ինչ հանգամանքներից դրդված մեր սրագրիչ հրապարակախօսները այնքան յամառութեամբ ժխտում են այս տարբերան ճշմարտութիւնը:

Եթէ հաւատափոխութիւնը մեր ազգի մէջ քարոզականութեան իրաւունք է ստացել, ժամանակ է, կարծեմ, հաշվվել վերջապէս դրան հետ, վասն զի «ժամանակին է ընդդէմ խնամի ասացեալ». յանդիմանել յոյսուածները կանոնիկի եւ բողոքական մեր ազգայնոց անհնարին է կրկին լուսաւորական դարձնել: Այս իրողութիւնը «Մշակը» բաց ըմբռնել է յուսանալով ընտ այն անգնահատելի ծառայութիւնը, որ մեր նախնեաց հաւատը մատուցել է հայ ազգին, նա ամենայն իրաւամբ պնդում է թէ լոկ լուսաւորականութիւնը եւ այն ևս առանց գիտական հոգեւորականաց անգոր է պաշտպանելու ազգիս ինքնուրոյնութիւնը արդի XIX դարում: Մենք միանգամայն համաձայն ենք յարգելի լրագրի համոզմանց հետ. արդարեւ ապրել այսպիսի մի դարում որ ազգայնութեանց դար է բառի բուն նշանակութեամբ եւ չը հասկանալ նրան կարեւորագոյն պահանջները, կատարեալ կարմատանութիւն է. դա մեծ ապատրայում թիւրաւոր չար հետեւանքներ կունենայ. բայց, աւաղ, ուշ կը լինի: Ահա ինչի դէմ է մտքատում ազգային շահերի արծուն ջատագով «Մշակը». պէտք է ապր եւ մտոք կոյր լինել, որ չը հասկանալ եւ բան արժանայն չը գնահատել նորա անկեղծ ազգասիրական եռանդը: